

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԻԱՍՂԱՐ ՄՈՀԱՄՄԱԴՆՈՍԵՅՆԻ ՇԵՔՈՖԹԵՀԱՍԳԱՐԱԲԱԴ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
(ԻՒՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.01. «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝
Գագիկ Մերյոժայի Գալստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝
Հովսեփ Իվանի Աղաջանյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝
Հասմիկ Նորիկի Գալստյան

Առաջատար կազմակերպություն՝

Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի մարտի 24-ին, ժամը 13:30-ին՝ Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Տնտեսագիտության թիվ 015 Մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գիտական գրադարանում:

Մեղմագիրն առաքվել է 2017 թվականի փետրվարի 20-ին:

015 Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար, տեխ.գ.դ., պրոֆ՝



Ա.Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: 2008թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո արագացող ինֆլյացիան և պետության աճող դերն ու ազդեցությունը տնտեսության մեջ, ինչպես նաև մասնավոր կառույցների՝ քաղաքական և տնտեսական շրջանակների միջամտությունները, կրկին տնտեսագիտական բանավեճերի առիթ դարձան:

Տնտեսական աճի ժամանակակից տեմպերը չի կարելի համեմատել նախորդ դարաշրջանում տեղի ունեցած տնտեսական աճի հետ:

Այդուհանդերձ, գործազրկության և աղքատության մակարդակը բավականին բարձր է բնակչության մեծամասնության շրջանում և չնայած այդ բոլոր հիմնարար փոփոխություններին, որ կատարվել են մարդկանց հասարակական և տնտեսական պահանջների զարգացման ոլորտում, դրանք օրեցօր նորանոր մասշտաբներ են ընդունում: Այլ կերպ ասած՝ մարդկանց պահանջմունքի և հասարակական սպասելիքների մակարդակի աճը պետական այնպիսի ծառայությունների առումով, ինչպիսիք են՝ պետական ուսուցումը, դաստիարակությունը, բարոյականությունը, առողջապահությունը, իրավակարգի պահպանումը, անվտանգությունը և պաշտպանության ապահովումը 21-րդ դարի հիմնական խնդիրներն են համարվում:

Այսօր կառավարության գլխավոր մտահոգությունը տնտեսության պետական կարգավորման հարցն է: Կարելի է ասել, որ շատ դեպքերում պետական կառավարման ուժեղացումը՝ առավել թույլ զարգացած երկրներում պատճառ է դարձել ծախսերի ավելացման, արդյունավետության կրճատման, պետական կառույցներում և ընկերություններում առաջընթացն ապահովող ուժի բացակայության:

Կառավարության դերը նախորդ դարում բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել: Նորագույն տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը և դրանց տարածումը, ժողովրդագրական պայթյունը կամ դեմոգրաֆիկ ճնշումների ավելացումը, բնապահպանական խնդիրների աճը, հատկապես համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու կամ ինչպես ընդունված է ասել՝ գլոբալիզացման ուղղությամբ մեծացող ճնշումները, այնպիսի մի իրավիճակ են ստեղծել, որ որոշ դեպքերում՝ դրանց շտկման ուղղությամբ կառավարությունը ստիպված է լինում համապատասխան քայլեր ձեռնարկել: Ուստի այս դեպքում պետության վարքագծի, դիրքի, պետության դերի, և ամենակարևորը այդ դերի կատարման ձևի մասին նոր պատկերացումների համակարգի ստեղծման անհրաժեշտություն է առաջանում: Մյուս կողմից, գոյություն ունի այլ պետությունների կողմից արդեն կիրառված փորձը՝ հատկապես այն պետությունների, որոնք բնակչության ակնկալիքների բավարարման և իրենց պարտականությունների իրականացման գործում առավել բարեհաջող և պատասխանատու են եղել և հաջողություններ են արձանագրել տնտեսության զարգացման՝ իրենց մոդելի մեջ, հատկապես հասարակական արդարության ապահովման գործում, կամ մեծապես նպաստել են աղքատության կրճատմանը և տիրապետում են այս մոտեցումների կիրառմանը: Հաջողություններն արձանագրվել են

այն դեպքում, երբ այդ նոր մոտեցումների մշակման մեջ պետության դերն ու ազդեցությունը մեծ է եղել:

Տնտեսական բարեփոխումների մեջ պետության տեղի և դերի խնդիրը, 20-րդ դարի 30-ական թվականներից ի վեր, շարունակ եղել է տնտեսագետների և տնտեսագիտության տարբեր ուղղությունների մասնագետների քննարկման առարկա:

Այս հարցի վերաբերյալ գոյություն ունեն մի շարք տարակարծություններ, և այս առումով ավելի լայն ուսումնասիրությունների անցկացման անհրաժեշտություն է զգացվում: Տարբեր կարծիքների հավաքագրումն այսպիսի ուսումնասիրությունների մեջ հաճախ կարող է լուծումներ առաջարկել և հարստացնել տեսությունը՝ նոր փորձով:

Ուսումնասիրելով պետության ունեցած պատմական և կոնցեպտուալ դերը և հիմնվելով փորձով ստուգված փաստերի վրա, որոնք առաջացել են պետության քաղաքական ուղղվածությունից ու քաղաքական գործողություններից, որոշումներից և պետական կառույցների, կազմակերպությունների ու աշխարհի մակարդակով դրանց ազդեցությունից, պետության մշակութային-տնտեսական զարգացումից՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ տնտեսական և հասարակական զարգացումն անհնար է պատկերացնել առանց ազդեցիկ և արդյունավետ պետության գոյության: Այսօր ընդունելի է համարվում այն տեսակետը, համաձայն որի հասարակական և տնտեսական զարգացման նպատակները բավարարելու համար անհրաժեշտ է ունենալ ազդեցիկ պետություն: Միաժամանակ ընդունվում է այն կարծիքը, որ այսպիսի պետությունը պետք է իր դերն իրականացնի ոչ միայն որպես առաջնորդ և ղեկավար, այլ՝ որպես աջակցող մարմին: Այլ կերպ ասած՝ պետությունը պետք է դառնա շուկայական գործունեության օժանդակողը և ո՛չ թե կատարողը:

Իրանի Իսլամական Հանրապետության՝ (ԻԻՀ) տնտեսությունն իր 4 տասնամյակների պատմության ընթացքում հանդիպելով բազմաթիվ դժվարությունների, ծավալային առումով մեծ աճ է գրանցել: Սակայն ներկայումս տնտեսությանը բնորոշ է տնտեսական աճի տեմպերի նվազումը, ցածր արտադրողականությունը, եկամուտների անհավասար բաշխումը, արտաքին առևտրի բացասական մնացորդը և գործազրկությունը:

ԻԻՀ տնտեսության կրած կորուստների վերաբերյալ ուսումնասիրությունների մեծ մասում համախոհություն է նկատվում վերոնշյալ հարցի շուրջ, առ այն, որ երկրի տնտեսական դժվարությունների հիմնական պատճառը հաճախ ոչ թե պետության մոտեցումից է բխում, այլ ազգային տնտեսության մեջ նրա զբաղեցրած դիրքից: Այն նաև անցած տասնամյակների ընթացքում պետության վարած քաղաքականության արդյունք է հանդիսանում: Ամենակարևոր պատճառների ցանկում կարելի է նշել ԻԻՀ տնտեսական կյանքում հայրենական արտադրանքի և ներդրումների զգալի մասի վրա պետության վերահսկողությունը և կառավարումը (ավելի քան 80%), որը կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի կատարման ընթացքում խիստ զգալի էր՝ պետության միջամտության տեսքով՝ ամբողջ ազգային տնտեսության մակարդակով:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտությունը նպատակամղված է վերլուծության ենթարկել և բնութագրել ԻԻՀ-ում տնտեսական քաղաքականության

արդյունավետությունը՝ շեշտադրելով մակրոտնտեսական մակարդակում պետության դերի նշանակությունը և կարևորությունը:

Գրված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել պետության դիրքի և տնտեսական բարեփոխումների նպատակների առնչությամբ առկա տարակարծությունները:
- Ուսումնասիրել պետության տնտեսական դերի վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետներն ու մոտեցումները:
- Ուսումնասիրել տնտեսական աճի գործոնները, այն հիմնախնդիրները, որոնք կապված են տնտեսության աճի և զարգացման հետ, ինչպես նաև դրանք իրագործելու մեխանիզմները:
- Ուսումնասիրել ԻԻՀ-ում տնտեսական բարեփոխումների ուղղությամբ իրականացվող գործողությունները, ինչպես նաև հետազոտել պետության դերի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները:
- Վերլուծել պետության դերն ԻԻՀ-ում տնտեսության զարգացման նախագծված տարբեր ծրագրերի մեջ:
- Ուսումնասիրել ԻԻՀ զարգացման ռազմավարական ծրագրերը՝ 2025թ.-ի հեռանկարային ծրագրի շրջանակներում:
- Ուսումնասիրել գլոբալացման ազդեցությունն ԻԻՀ-ի տնտեսական աճի մակարդակի վրա:

Հետազոտության վարկածները հետևյալն են.

1. Տնտեսության գլոբալացումը դրական նշանակալից ազդեցություն է ունեցել ԻԻՀ-ի տնտեսական աճի մակարդակի վրա:
2. ԻԻՀ-ի տնտեսական աճի մակարդակի և գլոբալացման միջև դրական կապը դիտվում է որպես ուղիղ և միակողմանի կապ: Մա նշանակում է, որ գլոբալացումը նպաստում է տնտեսական աճին, սակայն բարձր տնտեսական աճը գլոբալացման չի հանգեցնում: Այլ կերպ ասած՝ տնտեսության գլոբալացումն Իրանում տնտեսական աճի խթանման պատճառ է հանդիսացել:
3. Պետության չափի մեծացումը ԻԻՀ-ում արտադրության աճի մակարդակի վրա բացասական նշանակալից ազդեցություն է ունեցել:
4. ԻԻՀ-ի նավթային եկամուտների աճը դրական ազդեցություն է թողել երկրի տնտեսական աճի մակարդակի վրա:
5. Առևտրի ազատականացումը դրական ազդեցություն է ունեցել ԻԻՀ-ում մեկ շնչի հաշվով արտադրության աճի վրա:
6. Տնտեսության գլոբալացման և ԻԻՀ-ում մեկ շնչի հաշվով արտադրության մակարդակի միջև դրական կապը հաստատված է որպես երկու հավասարազոր օղակների կապ: Այլ կերպ ասած՝ տնտեսության գլոբալացումը պատճառ է հանդիսացել մեկ շնչի հաշվով արտադրության մակարդակի ավելացմանը, իսկ վերջինս էլ նպաստել է երկրում ազատ առևտրի զարգացմանը:
7. Պետության հանրային ծախսումների ավելացումը բացասական ազդեցություն է ունեցել Ջինիի գործակցի վրա և դրա կրճատման պատճառ է հանդիսացել (դա նշանակում է եկամտի բաշխման բարելավում):

8. Ինֆլյացիայի և գործազրկության մակարդակի աճը դրական ազդեցություն է ունեցել Ջինիի գործակցի վրա և նպաստել է դրա ավելացմանը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության **օբյեկտ** են հանդիսանում ԻԻՀ պետական ապարատը, դրա դերը և կառավարման մեթոդները, ինչպես նաև պետական ապարատի՝ տնտեսական բարեփոխումների ուղղությամբ կատարված գործողությունները՝ երկրի ամբողջ տնտեսության մասշտաբով: Սույն ուսումնասիրության շրջանակում դիտարկվել է 1980թ.-ից հետո հաստատված պետական վարչակարգերի դերը՝ պետական համակարգի և կայացված որոշումների մեջ:

Հետազոտության **առարկա** են հանդիսանում երկրի զարգացման ծրագրերի (1-ից 4-րդ) վրա հիմնված տնտեսական բարեփոխումների նախագիծը, մասնավորապես սուբսիդիաների կրճատման վրա հիմնված տնտեսական բարեփոխումների և ԻԻՀ տնտեսական զարգացման 20-ամյա հեռանկարային ծրագրերը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսությունում առաջադրված խնդիրների լուծման նպատակով որպես տեսական հիմք հանդիսացել են տնտեսագիտության դասական և ժամանակակից տեսությունների հիմնական դրույթները, ատենախոսության թեմային առնչվող իրանցի և օտարազգի ուսումնասիրողների աշխատանքի արդյունքները, նաև համացանցի համապատասխան կայքերում գետեղված նյութերը՝ պետության դերի և բարեփոխումների վերաբերյալ:

Հետազոտությունը վերլուծական-նկարագրական է: Որպես մեթոդաբանական հիմք են հանդիսացել վիճակագրական, էկոնոմետրիկ և ռեգրեսիոն թեստ վերլուծական մոդելները: Հետազոտության վարկածները ստուգելու համար կիրառվել են էկոնոմետրիկ մոդելներ: Մասնավորապես կեղծ ռեգրեսիայից խուսափելու համար մոդելների մեջ փոփոխականները ենթարկվել են հուսալիության թեստի: Վերջում կիրառվել է Գրենջերի պատճառականության թեստը՝ պարզ ռեգրեսիոն մոդելի մեջ, արձանագրված կապերի ամրության և գլոբալ աճի մեջ վստահ լինելու համար: Վերլուծությունները կատարվել են Միկրոֆիտ համակարգչային ծրագրի միջոցով:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը կայանում է հետևյալում.

1. Էկոնոմետրիկ մոդելների գործադրմամբ բացահայտվել է, որ տնտեսության գլոբալացումը դրական ազդեցություն է ունեցել ԻԻՀ-ի տնտեսական աճի մակարդակի վրա:

- ԻԻՀ-ի տնտեսական աճի և գլոբալացման միջև կապը հաստատված է որպես դրական, նշանակալի /5% մակարդակում/ և միակողմանի կապ, այլ կերպ ասած՝ տնտեսության գլոբալացումը հանդիսացավ խթանիչ գործոն ԻԻՀ-ում տնտեսական աճի համար:

2. Հիմնվելով պետության չափերի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքների վրա պարզվել է, որ ԻԻՀ-ի տնտեսության՝ արտադրության աճի վրա պետության չափերի մեծացումը թողել է բացասական ազդեցություն:

- Մասնավորապես Գրենջերի փորձի արդյունքները բացահայտել են, որ տնտեսության գլոբալացումը նպաստել է մեկ շնչի հաշվով արտադրության մակարդակի աճին, որն էլ իր հերթին խթանել է մեկ շնչի հաշվով արտաքին առևտրի զարգացմանը:
- Իր հերթին առևտրի ազատականացումը նույնպես թողել է դրական ազդեցություն մեկ շնչի հաշվով արտադրության աճի վրա:

3. Բազմագործոն ռեգրեսիոն մոդելների կիրառությամբ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով, ԻԻՀ-ի համար լուսաբանվել է հանրային կրթության և աղքատության միջև կապը: Բացահայտվել է, որ հանրային ծախսերի աճը դրական է անդրադարձել եկամուտների արդար բաշխման վրա, նպաստել է եկամուտների անհավասարաչափ բաշխման կրճատմանը և հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

- Հանրային ծախսերի 1% միջին աճը նվազեցրել է Ջինիի գործակիցը 0.11-ով: /Մա մատնանշում է հանրային ծախսերի բացասական ազդեցությունը Ջինիի գործակցի վրա/:
- Միաժամանակ ինֆլյացիայի և գործազրկության աճը բացասաբար է անդրադարձել եկամուտների բաշխման վրա և Ջինիի գործակցի ավելացման պատճառ է դարձել:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Ինչպես ցույց է տալիս ուսումնասիրության կիրառական նշանակությունը, այս ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հանրապետության նախագահի աշխատակազմի, ԻԻՀ-ի խորհրդարանի (մեջլիս), ինչպես նաև տնտեսության բարեփոխման նախագծով զբաղվող հատուկ մասնագիտական կոմիտեի կողմից, որպեսզի վերջիններս, այս հետազոտության մեջ ներկայացված էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ, ավելացնեն պետության արդյունավետության գործակիցը երկրի տնտեսական բարեփոխումների մեջ: Դա հնարավորություն կընձեռի իրականացնել 2025թ. ԻԻՀ զարգացման հեռանկարային ծրագիրը:

Ատենախոսության դրույթների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Երևանի պետական համալսարանի “Տեսական և ընդհանուր տնտեսագիտության” ամբիոնի նիստերում՝ 2013թ., 2014թ. և 2016թ: Ատենախոսության թեմայի շրջանակներում հրապարակվել են 7 գիտական հոդվածներ, որոնցից երկուսը լույս են տեսել միջազգային պարբերականներում և ամսագրերում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, երեք գլուխներից, եզրակացություններ և առաջարկություններ բաժնից, գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը ներառում է 8 զժապատկեր, 9 աղյուսակ: Ատենախոսության ծավալը կազմում է 114 էջ /առանց հավելվածի/:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության նախաբանում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը, խնդիրները, սահմանվել են ուսումնասիրության շրջանակները, ներկայացվել են ուսումնասիրության տեսական, մեթոդաբանական հիմքերը, գիտական արդյունքները և նորույթը, ինչպես նաև գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ “Պետության տնտեսական դերի վերաբերյալ տարբեր մոտեցումներն ու տեսությունները” վերնագրի տակ ուսումնասիրվել են պետության տնտեսական դերի վերաբերյալ առկա տարբեր կարծիքները և տեսակետները: Այս տեսակետները ներկայացվել են 3 առանձին բաժիններով, որոնցից առաջինում վերլուծության է ենթարկվել պետության տնտեսական դերը՝ սկզբից մինչև Քեյնսի ժամանակաշրջանը, երկրորդում՝ մենաբանվել են Քեյնսի տեսակետները, իսկ երրորդում՝ տեղ է հատկացվել շուկայի բարեփոխումների ժամանակաշրջանում պետության ունեցած տնտեսական դերի ուսումնասիրությանը:

Երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում նոր գաղափարներ ի հայտ եկան, որոնցից ամենաժամանակակիցը Քեյնսի ուսմունքն էր: Ջոն Մեյնարդ Քեյնսն (1883-1946թթ.) անգլիացի տնտեսագետ էր, որի հայացքներն ու տեսությունը խորը ազդեցություն են ունեցել տնտեսագիտության մեջ: Ապրելով Մեծ դեպրեսիայի ժամանակաշրջանում՝ 1929-1931թթ., նա այս ճգնաժամի համար սկզբնապատճառ է համարել պահանջարկի կրճատումը: Այս իրավիճակին լուծում առաջարկեց կիսասոցիալիստական մոդելը: Համաձայն այդ նախագծի՝ եթե բնակչությունն անվճարունակ է դառնում, դա հանգեցնում է արտադրական ցիկլի դանդաղեցմանը, հետևաբար պետությունը պետք է բարձրացնի իր ծախսերը՝ արտադրության անկումը կանխելու համար: Քեյնսի պնդման էությունը կայանում էր նրանում, որ երբ պետությունն իր նախագծերով դրամական միջոցներ է տրամադրում ժողովրդին, ժողովուրդն այդ միջոցներն օգտագործում է տարբեր իրեր գնելով: Այս գործընթացի արդյունքում բարգավաճում են այդ իրերն արտադրող գործարանները, նոր աշխատատեղեր են ձևավորվում, ապա նոր աշխատողներն իրենց աշխատավարձով գնումներ են կատարում, ինչի արդյունքում գործարաններն ավելի շատ են բարգավաճում: Այս գործընթացը դարձյալ կրկնվում է, աշխատավարձը շուկա է մտնում, և բարգավաճման ցիկլը համապատասխանաբար կրկնվում է: Ամերիկյան և նրա օրինակով շարժվող այլ երկրները, որոնք լճացման եզրին էին կանգնած, կիրառեցին Քեյնսի տեսությունը: Արդյունքում այս երկրները տնտեսական զարգացման ուղղությամբ շարժվելու հնարավորություն ստացան՝ հասնելով այն աստիճանի, որ նույնիսկ կարող էին հաստատուն տնտեսական համակարգ ստեղծել:

Տնտեսական ծրագրավորման համար հուսալի հեռանկարներ ստեղծվեցին գիտության զարգացման և տեխնոլոգիական առաջընթացի արդյունքում, ինչպես օրինակ համակարգչային տեխնոլոգիաների, հաշվարկման միջոցների և տեխնիկայի կատարելագործումը, կանխատեսումները և ծրագրավորումը, էկոնոմետրիկ և

վիճակագրական մոդելների առաջընթացը, մաթեմատիկական մոդելների նախագծումը: Այս երևույթն իր հերթին նպաստեց սոցիալական տնտեսության բարգավաճմանը:

Նման պայմաններում զարգացող երկրների մի մասը սկսեց տնտեսական հետընթաց ապրել՝ տնտեսական զարգացման հասնելու համար, որպես տնտեսությունը զարգացնող հիմնական օղակ օգտագործելով պետական ապարատի ուժը և ո՛չ թե մանր ու միջին գործարարությունը: Այս դեպքում արդյունաբերության հիմքի վրա տնտեսության զարգացման ստրատեգիա որդեգրելը՝ գյուղատնտեսության վրա հիմնված երկրի տնտեսությունը տանում էր բացառապես մեկ ուղիով՝ անտեսելով մյուս ոլորտները: Այլ կերպ ասած՝ այնպես, ինչպես օրինակ գյուղատնտեսությունից ստացված եկամուտների մի մասը կարող է մոդիֆիկացվել և վերադարձվել բնակչությանը, օրինակ՝ թոշակային ֆոնդին, այնպես էլ այս դեպքում կարելի է օգտագործել արդյունաբերական ապրանքների արտահանումից ստացված եկամուտը: Դրա պատճառն այն է, որ արդյունաբերության ոլորտում տարբեր ճյուղերի միջև կապերը՝ այլ ոլորտների համեմատությամբ առավել ամուր են և ընդլայնված: Այլ կերպ ասած, արդյունաբերության ոլորտում ավելացված արժեքի առաջացումը՝ բոլոր ճյուղերի արտադրանքի ընդարձակ կիրառում է պահանջում, այն դեպքում, երբ այս կապը գյուղատնտեսության և սպառողական ապրանքների ոլորտներում թույլ և սահմանափակ է: Գոյություն ունեցող տեսությունները և տնտեսական քաղաքական պայմանները պատճառ դարձան թույլ զարգացած և զարգացող տնտեսությունների հակմանը դեպի տնտեսության պետականակենտրոն զարգացումը: Ըստ այս տեսությունների՝ պետությունը ուժի և օրենքի բարձրագույն մարմինն է, որը սահմանվում է աշխարհագրական մի տարածաշրջանի վրա՝ իշխելով տվյալ տարածքում բնակչություն հաստատած բնակչության վրա: Այս մարմինն ունի մի շարք իրավական և վարչարարական օրենքներ, իր իրավական տարածքում գոյություն ունեցող բոլոր խնդիրները վերահսկելու համար, և քաղաքացիները պարտավոր են հետևել դրանց: Սրանով ձևավորվում էր տնտեսական օրենքների ամբողջական և անհատական մի համակարգ, որը կիրառելի էր տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում: Այս համակարգի հիման վրա սահմանվում էին յուրաքանչյուր քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները: Չնայած օրենքի կիրառումը բախվում է կազմակերպված ընդդիմադիր ուժի հակադրմանը՝ դրա մենաշնորհը պատկանում է բացառապես պետությանը: Արդյունքում պետությունը հիմնում է մի կենտրոնական բյուրոկրատական ապարատ, որտեղ հավաքում է մասնագետների մի կոլեկտիվ, որի միջոցով այն, հիմնվելով կազմակերպված ընդդիմադիր ուժի վրա, իր իշխանությունը տարածում է հասարակության վրա:

Գլխի վերջում քննարկվել է շուկայական բարեփոխումների ժամանակաշրջանում պետության ունեցած տնտեսական դերը: Բոլոր տնտեսական համակարգերում այս կամ այն չափով առկա է տնտեսության պետական կարգավորում: Ակնհայտ է, որ ժամանակակից ազատ շուկայական հարաբերությունների զարգացման մեջ միջամտությունն ուղղված է պետության տնտեսական համակարգի բարելավմանը: Սակայն այս դեպքում ազատ մրցակցային դաշտի ապահովումը տնտեսական ներդրումներից ավելի կարևոր է դառնում: Ըստ տնտեսական զարգացման շուկայական

հարաբերությունների կանոնակարգման համակարգի՝ վերը նշված վերահսկողության մարմինների պարտականությունը նախ տնտեսական անվտանգության ապահովումն է, ապա նաև ըստ սոցիալական պահանջների՝ որոշակի փոփոխությունների կատարումը:

Երկրորդ գլխում՝ «Ժամանակակից տնտեսական զարգացման հիմնարար հարցերը» վերնագրով մանրամասն և համակարգային վերլուծության են ենթարկվել ժամանակակից տնտեսության տնտեսական աճի և զարգացման հիմնախնդիրները: Այս գլուխը 3 ենթագլուխների է բաժանվում: Առաջին ենթագլխում ուսումնասիրվել են տնտեսական աճը պայմանավորող գործոնները և դրանց կապը ժամանակակից տնտեսության հետ: Երկրորդ ենթագլուխը՝ տնտեսության զարգացմանն ու աճին ուղղված գործողությունների ուսումնասիրության վերաբերյալ է: Երրորդ ենթագլխում քննարկվել է տնտեսության զարգացման և աճի հիմնախնդիրն Իրանում:

Դասական շրջանի տնտեսագետները՝ հնուց ի վեր համոզված են եղել, որ տնտեսական աճը հնարավոր չէ համատեղել եկամտի հավասարաչափ բաշխման հետ: Այս առումով պետք է նշել, որ գոյություն ունի Պարետո օպտիմալություն հասկացություն, համաձայն որի մի անհատի եկամտուտի ավելացումը չի նշանակում մյուսի եկամտուտի նվազում: Դասական տնտեսագետների համոզմամբ, եկամտուտների բաշխման մեջ անհավասարության սրացումը տնտեսական արագընթաց աճի ապահովման անհրաժեշտ նախապայմաններից է, քանի որ ուշադրություն էին դարձնում այն հանգամանքի վրա, որ գրեթե ամբողջ եկամուտը ծախսողները քիչ եկամուտ ունեցողներն էին: Տնտեսական աճը կապված է բնակչության բարձր եկամուտ ունեցողների խնայողությունների հետ, ինչը կապիտալի ներդրման հիմքեր է ստեղծում: Սրա հիման վրա՝ ցանկացած տնտեսական համակարգ, որը հիմնված է եկամտուտների անհավասարության հիմքի վրա, զարգացման սկզբնական շրջանում ավելի բարձր տնտեսական աճ կունենա, քան այն համակարգերը, որոնք հիմնված են եկամտի հավասարաչափ բաշխման սկզբունքի վրա: Այս ասպարեզում քննարկված առաջին տեսակետը Պարետոյի օրենքն է (1897 թ.): Նա իր հայտնի օրենքի մեջ բացատրում է, որ բոլոր ժամանակներում և ամենուրեք եկամտի բաշխումը կայուն է մնում: Նա համոզված է, որ այս անփոփոխ հաստատումը, կառուցվածքային փոփոխությունները և հավասարությանը միտված հարկերը չեն կարող փոփոխել այն: Պարետոյի համոզմամբ՝ նա գտել էր տնտեսական մի այնպիսի հաստատուն, որը կարելի էր համեմատել ֆիզիկայի մեջ երկրի ձգողականության ուժի արագացման հետ, և այսպիսով տարբեր ժամանակներում տնտեսության մեջ հաստատվում է եկամտի բաշխում: Սակայն այս տեսակետը հետագայում լուրջ քննադատությունների ենթարկվեց:

Եկամտի բաշխման ոլորտում ամենակարևոր տեսակետն արտահայտել է Կուզնեցն՝ 1955թ. իր «Տնտեսական աճը և եկամտի բաշխումը» հոդվածում: Այս հոդվածում Կուզնեցն ուսումնասիրել է եկամտի բաշխումը՝ զարգացման տարբեր մակարդակների կտրվածքով: Նա համեմատելով Հնդկաստանը, Շրի Լանկան, Պուերտո Ռիկոն, Անգլիան և Միացյալ Արաբական Էմիրությունները հանգեց այն եզրակացությանը, որ եկամտի անհավասարությունն աճի սկզբնական փուլում ավելանալու միտում ունի, այնուհետև այն աստիճանաբար հավասար է դառնում և ի վերջո կրճատվում է հետագա փուլերի ընթացքում:

1960թ. գերիշխող դարձավ այն տեսակետն, ըստ որի թույլ զարգացած երկրներում այս մոդելի արդյունավետությունն ավելի ակներև է: Այս տեսակետը քննարկվել է նաև Իրվինգ Կրավիցի կողմից, ով Կուզնեցի նման ևս եկավ այն եզրահանգմանը, որ թույլ զարգացած երկրներում եկամտի բաշխվածությունը աղյուսակի ստորին հատվածում ավելի քիչ է, իսկ վերևի հատվածում՝ ավելի շատ: Տնտեսական աճի ազդեցությունը եկամտի բաշխման վրա երեք եղանակով է ընթանում.

ա. Առաջին մոտեցման համաձայն, 1950-1960թթ., տնտեսական աճը ուղղահայաց կերպով ավելանում է՝ պարբերաբար անցնելով հարուստներից աղքատներին, այն իմաստով, որ զարգացումից առաջացած եկամուտը նախ հասնում է հարուստներին, ապա հաջորդ փուլում, երբ նրանք ծախսում են այդ եկամուտները, աղքատներն են օգտվում դրանցից:

բ. Երկրորդ մոտեցումը աղքատության մակարդակի աճի պատճառ է դառնում: Այս դեպքն այն ժամանակ է նկատվում, երբ անհավասարությունն այնքան է ավելանում, որ աղքատության նվազման գործոնը չեզոքանում է:

գ. Երրորդ մոտեցումն օգնում է աղքատներին, որպեսզի նրանք ակտիվորեն մասնակցեն տնտեսական գործունեությանը և համապատասխան չափով հարուստներից ավելի շատ օգտվեն՝ ընդհանուր եկամուտի ավելացման արդյունքում:

Վերջին տասնամյակում շատ ուսումնասիրություններ են կատարվել աճի աղբյուրների և գործոնների բնագավառում, որը հանգեցրել է ներքին աճի չափանիշների նոր մոդելների ստեղծմանը: Այս մոդելների համաձայն՝ տնտեսության ներքին մեխանիզմները, ինչպես օրինակ ուսուցումը, գիտության և արհեստների համապատասխան մակարդակը, մեծ դեր ունեն տնտեսական աճի մեջ:

Տնտեսական աճի նոր մոդելներում, կայունության ապահովմանն ուղղված քաղաքական հարկադրանքները, մարդկային կապիտալի զարգացումը, եկամտի ավելացման պետական քաղաքականությունը և արտաքին առևտրի ծավալումը համարվում են աճը պայմանավորող գործոններ: Այլ կերպ ասած՝ հիմնվելով այս ուսումնասիրությունների վրա, տնտեսական աճը հիմնվում է մի այնպիսի մեխանիզմի վրա, որտեղ արտադրության սկզբնական կառույցներից բացի կան նաև այլ գործոններ: Պետք է ուշադրություն դարձնել այս հանգամանքի վրա, որ եթե անհրաժեշտ ենթահող չստեղծվի այս մեխանիզմի իրականացման համար, ապա չի կարելի ակնկալել կայուն տնտեսական աճ:

Այս առումով իսլամական երկրները, զարգացման փուլում գտնվող երկրները, ինչպես նաև թույլ զարգացած երկրները բախվում են այնպիսի դժվարությունների հետ, ինչպիսիք են եկամտի և տնտեսական աճի ցածր մակարդակը: Ուստի այսպիսի դժվարություններից ազատվելու համար վերոնշյալ երկրներին անհրաժեշտ է արագ և երկարատև տնտեսական աճի ապահովում:

Ըստ իրանական լրատվամիջոցների՝ «Էկոնոմիստ» լրատվական կենտրոնի, 2012թ. Իրանի տնտեսական աճն ակնկալվում էր 3%-ով, ինչի հիմնական պատճառը նավթի գնի բարձրացումն ու նավթի արտադրության աճն էր համարվում: «Էկոնոմիստ»-ը մեջբերում է, որ Իրանի իրական ՀՆԱ-ի աճը՝ 2011թ. կազմել էր 0.5%, որը հիմնականում կապված է եղել նավթի գնի կրճատման հետ: Աճի այսպիսի անկումը՝

կապիտալ ներդրումների և մասնավոր սպառողական ծախսումների նվազման հետևանքով է եղել: 2014թ. Իրանի տնտեսական աճը կազմել էր 3.8%:

Չնայած նրան, որ գլոբալացման և ազատականացման միտումը տիրել է ամբողջ աշխարհին, զարգացող երկրներում դրական և ցանկալի հետևանքների հետ մեկտեղ առաջ են եկել մի շարք խնդիրներ և բացասական ազդեցություններ: Զարգացող երկրները պետք է կատարեն տնտեսական բարեփոխումներ, որոնք ենթադրում են ազատականացում ռենտայի նվազեցման միջոցով, արդյունավետության և մրցակցության մակարդակի աճ, արտահանման մեծ հնարավորությունների ստեղծում և առևտրի ազատականացում, ապրանքաշրջանառության գործընթացում առկա խոչընդոտների վերացում, կապիտալի շուկայի ստեղծում, պետության չափի փոքրացում և տնտեսության մեջ նրա դերի սահմանափակում, մասնավորեցման ընդլայնում և տարածում և պետության ուղղակի աջակցության բացառում և այլն: Նրանք պետք է երկրի տնտեսության բարգավաճման և դինամիկության պատճառ դառնան: Իրանը մեծ քայլեր է ձեռնարկել այս ուղղությամբ:

Երրորդ գլխում՝ «Տնտեսական բարեփոխումներն ԻԻՀ-ում՝ պետության դերի ընդգծմամբ» վերնագրով ներկայացվել են 3 ենթավերնագրեր՝ յուրաքանչյուրն իր առանձին բաժիններով, որտեղ ուսումնասիրության և վերլուծության է ենթարկվում ԻԻՀ-ում տնտեսական բարեփոխումների գործընթացում պետության ունեցած դերը: Գլխի առաջին բաժնում յուրաքանչյուր ոլորտի համար, անկախ կերպով, ներկայացվել է տնտեսական բարեփոխումների նպատակների ուսումնասիրությունը: Երկրորդ բաժնում տնտեսության տարբեր ծրագրերի շրջանակներում ուսումնասիրվում է ԻԻՀ տնտեսության մեջ պետության դերը: Մասնավորապես, այս բաժնում ուսումնասիրվում են ԻԻՀ զարգացման ռազմավարական ծրագրերը՝ 2025թ. հեռանկարային փաստաթղթի հիման վրա, նաև վերլուծվում է էներգիայի սուբսիդավորումը և նավթային պաշարների գների ազատականացումը: Գլխի վերջին մասում ներկայացվել են ԻԻՀ-ում կիրառված էկոնոմետրիկ մոդելները և վարկածների վերլուծությունները:

Սուբսիդավորման եղանակն այն հիմնախնդիրներից է, որը ներկայումս քննարկվում է որպես սուբսիդավորման համակարգի ամենակարևոր բարեփոխումներից մեկը և գլխավորապես կենտրոնացել է էներգիայի սուբսիդիաների վրա: Այս խնդիրը ներկայացվել է սուբսիդիաների նպատակաուղղման և երկրի տնտեսական, հասարակական և մշակութային զարգացման ծրագրերի օրենքի շրջանակներում:

Սուբսիդիաների կիրառումը կանխիկ¹ դրամի տեսքով պահանջում է հատուկ պայմաններ: Հասարակության խոցելի շերտերի բացահայտումը և եկամտային տարբեր դեցիլների մասին համապարփակ տեղեկատվության հավաքագրումը սուբսիդիաների տրամադրման կարևոր քայլ է հանդիսանում: Մա կարևորագույն քայլ է նախագծի հաջող իրականացման և սուբսիդիաների նպատակային օգտագործման համար: Մա նաև չափազանց կարևոր է օրենքների և համապատասխան կառույցների հաստատման,

¹ Իրանի կառավարության որոշման համաձայն, ապրանքային տեսքով սուբսիդիաները փոխարինվել են կանխիկ դրամի տեսքով սուբսիդիաների, որոնք ամսական կտրվածքով բաշխվում են երկրում գտնվող յուրաքանչյուր ընտանիքի՝ ըստ անդամների թվի:

նախագծի հաջողության ապահովման համար: Ամենալուրջ վտանգը, որ կարող է առաջանալ սուբսիդիաների կանխիկ տրամադրման ժամանակ, կոռուպցիոն ռիսկերի ավելացումն է՝ որոշ կառույցների և անհատների համար: Ուստի նախագծի իրագործման նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան վերահսկող կառույցներ:

Իրագործման մեթոդը մյուս պայմանն է, որը կարևորվում է դոտացիաների տրամադրման մեջ: Նախատեսված եղանակում, ըստ պետության պատասխանատուների, շահառուներն իրենց եկամտային դեցիլների համաձայն դասակարգվում են 3 տարբեր խմբերի մեջ: Առաջին խմբի մեջ մտնում են 4 ստորին դեցիլները, երկրորդ խումբն ընդգրկում է հաջորդ 3 դեցիլները, իսկ երրորդը՝ վերին 3 դեցիլները: Առաջին և երկրորդ շերտերը, որոնք ընդգրկում են ցածրից բարձր 7 դեցիլները կազմում են այս նախագծի թիրախային խմբերը, և համապատասխանաբար ավելի շատ դոտացիաներ են ստանում:

ԻԻՀ պետական կառույցի միջոցառումները տնտեսության տարբեր ծրագրերի շրջանակներում հետևյալն են.

1. Կենտրոնական իշխանության ամրապնդում և տեղական իշխանության կրճատում:
2. Կենտրոնական իշխանության սահմանների բնորոշում և հաստատում:
3. Ազգային ինքնության կայունացում և ամրապնդում, հատկապես մշակութային միասնությունն ու ընդհանուր լեզուն, որն անհրաժեշտ քաղաքական մթնոլորտ է ստեղծում ազգային և միասնական տնտեսության առաջացման և զարգացման համար:
4. Կանոնավոր բանակի, ոստիկանության և ժանդարմերիայի նման ներքին ուժերի ստեղծում:
5. Օրինապահության և կարգուկանոնի ամրապնդում:
6. Ժամանակակից օրենքի և իրավական համակարգի ստեղծում:
7. Ֆեոդալական կարգերի սահմանափակում և խոչընդոտների կրճատում:
8. Բանկային ցանցերի ծավալում:
9. Միասնական չափման համակարգերի և ստանդարտների ստեղծում:
10. Միասնական ազգային տնտեսական համակարգի ստեղծում, այդ թվում՝ մարզերի ներքում ազատ առևտրի խոչընդոտների կրճատում և միասնական ազգային շուկայի ստեղծում:
11. Մասնավորեցման օրենքների սահմանում և գույքային իրավունքների սահմանում և ապահովում, այդ թվում ներդրումներին և դրանց ապահովմանը վերաբերվող օրենքների մշակում:
12. Աշխատանքային օրենքների կազմում և կարգավորում:
13. Պետության բյուրոկրատիայի արդիականացում:
14. Ֆինանսական համակարգի կարգավորում և բարելավում:
15. Տրանսպորտային ցանցերի ստեղծում, օրինակ՝ ճանապարհային շինարարություն և երկաթուղիների հիմնում:
16. Փոստի և հաղորդակցման ցանցերի ստեղծում:

17. Ազգային տնտեսության և արդյունաբերության պաշտպանություն, հատկապես նորաստեղծ արդյունաբերական ձեռնարկությունների հարկացուցակի կազմման ճանապարհով, ներդրումների ներմուծման և արտահանման կարգավորում:

18. Կապիտալը կուտակելու խրախուսում՝ աշխատուժի կարգապահության ապահովման միջոցով, կապիտալի հավաքագրում հարկային համակարգի միջոցով, դրամաշնորհների և վարկերի տրամադրում, ձեռնարկատիրական գործունեության համար հարկերից ազատում և արտոնյալ տոկոսադրույքների հատկացում:

ԻԻՀ 2025թ. հեռանկարային փաստաթղթի առանձնահատկություններն են՝

1. Բազմակողմանի լինելը, 2. Արդի տեսակետ ունենալը, 3. Ջարգացման հարցի վերաբերյալ յուրահատուկ տեսակետ ներկայացնելը 4. Առանցքային իմացությունը 5. Իսլամական աշխարհի և աշխարհագրական ասպարեզում հատուկ տեսակետը 6. Հարգանքի սկզբունքի հիման վրա կառուցողական հարաբերություններ ունենալը 7. Փաստաթղթի մեջ վերահսկման և կարգապահական մեխանիզմներ ունենալը:

Այս հայեցակարգը հաշվի է առնվել տարեկան բյուջեի և զարգացման ծրագրերի հաստատման, կազմման և պատրաստման մեջ: Հաշվի է առնվել այն հանգամանքը, որ նրանց ամբողջական ցուցանիշները, այդ թվում՝ ներդրումների մակարդակը, չափը, տարեկան եկամուտը, ՀՆԱ-ն, զբաղվածության և գնաճի մակարդակը, հասարակության վերին և ստորին դեցիլների միջև եկամուտների տարբերության կրճատումը, անվտանգության և պաշտպանական ուժերի, կրթության և մշակույթի աճը պետք է համապատասխանեն հեռանկարային պահանջներին, նպատակներին և զարգացման քաղաքականությանը:

Պետական սուբսիդիաների կատեգորիայի հանդեպ երկակի տեսակետներ գոյություն ունեն: Նախ և առաջ Իսլամական խորհրդի մեջլիսի համաձայնությամբ ընդլայնվեցին սուբսիդիաների ծավալներն ու քանակը, որը կատարվեց գների ընդհանուր մակարդակը վերահսկելու նպատակով: Ընդլայնվեցին նաև զարգացման չորրորդ ծրագիրը և նախորդ կառավարությունների նախագծերը, որոնք ազգային տնտեսության կտրվածքով խորացրեցին սուբսիդավորման պատճառով ստեղծված ճգնաժամը: Սուբսիդիաների լայնածավալ բաշխման անբավարար արդյունքների առաջացումից և գործողության ազդեցությունից հետո իններորդ կառավարությունը /Ահմադինեժադի կառավարման օրոք/ որոշեց մի հեղափոխական նախաձեռնություն կատարել՝ «Մեծ վիրահատություն» անվան տակ, և որոշեց ազգային տնտեսության կառույցում բարեփոխումներ կատարել՝ սուբսիդիաների տեսքով:

Պետության առաջին նախագիծն Իրանի տնտեսական կառուցվածքում բարեփոխումներ կատարելն էր, որն անվանվեց «Սուբսիդիաները նպատակաուղղված դարձնել»: Ուշադրություն դարձնելով այս ծրագրի համար ընտրված մեթոդին, այս ծրագիրը կարելի է անվանել «Սուբսիդիաների տրամադրում կանխիկ տեսքով»:

Այս գլխի վերջին ենթավերնագրում /3.3. կետում/ ներկայացվել են Իրանում կիրառված էկոնոմետրիկ մոդելները, հետազոտության փոփոխականները, որոնց կայունությունը հերթականությամբ ստուգվում է Դիքի Ֆուլլերի թեստի միջոցով:

Վերլուծական աշխատանքներում OLS մեթոդը կիրառելով, հանգել ենք այն պնդմանը, որ փոփոխականները՝ իրենց կիրառման ընթացքում կայուն են, սակայն՝

ավելի հաճախ դրանք դրսևորում են անկայունություն: Այդ առումով անհրաժեշտ է փոփոխականների կիրառումից առաջ՝ թեստի միջոցով ստուգել դրանց կայունությունը: Թեստի փոփոխականների վավերականությունը ստուգելու համար Դիքի Ֆուլլերն ընդհանրացրել է ամենատարածված դիագնոստիկ թեստերից մեկը: Որպես կախյալ փոփոխական՝ (y) այստեղ հանդես է եկել ընդմիջումների քանակը: Ավտոկորելյացիայի բացառման համար անհրաժեշտ է կախյալ փոփոխականի ընդմիջումների որոշակի քանակ: Այդ ընդմիջումներն անհրաժեշտ են հետազոտության մեջ սխալների թիվը նվազագույնի հասցնելու համար, որը կատարվում է AIC, SBC, HQC (Աքայիք, Շվարց-Բեյեսիան, Հանան Քուին) չափանիշների միջոցով: Արդյունքները վկայում են, որ GXO, GCGDP, GTERM փոփոխականները կայուն են 5% մակարդակում, հակառակ այլ փոփոխականների, որոնց կայունությունը մերժվում է 5% մակարդակի դեպքում:

Տեսասական աճի մոդելի վերլուծությունը:

ԻԻՀ երկարաժամկետ աճի մակարդակի վրա առևտրի գլոբալացման ազդեցության ուսումնասիրման համար կիրառվել է գծային ռեգրեսիոն թեստ մոդելը, կրելով էկոնոմետրիկ մոդելի առանձնահատկությունները, որտեղ նկատի են առնված տեսական հիմքերը, պարամետրերի վիճակագրական նշանակությունը, պարամետրերի համապատասխանությունը տեսական ակնկալիքների հետ, որը վերամշակվել է որպես մի արդյունավետ մոդել: Վերլուծվել և փորձարկվել են հետազոտության վարկածները:

$$\begin{aligned}
 GCGDP = & 17.188 + 0.342 XM GDP + 15.22 LHIPOP + 0.625 IGDP + 0.146 GXO \\
 & (-4.5) \quad (7.01) \quad (4.4) \quad (2.6) \quad (5.99) \\
 & -0.382 GGDP - 0.041 GTERM - 9.497 DREV + e \\
 & (-2.93) \quad (-1.83) \quad (-4.04) \\
 R^2 = & 0.81 \quad DW = 2.22 \quad F = 25.01 \quad (1)
 \end{aligned}$$

որտեղ՝

- GCGDP-ն ցույց է տալիս մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը /1989թ. հաստատուն գներով/,
- XM GDP-ն՝ առևտրի հարաբերությունը ՀՆԱ-ին /1989թ. հաստատուն գներով/,
- LHIPOP-ը՝ երկրի բնակչության նկատմամբ միջնակարգ կրթությամբ ուսանողների քանակն է լոգարիթմի տեսքով,
- IGDP-ն՝ ներդրումների հարաբերությունը ՀՆԱ-ին /1989թ. հաստատուն գներով/,
- GXO-ն՝ նավթային արտահանումների աճի մակարդակը /1989թ. հաստատուն գներով/,
- GGDP-ն՝ հանրային ծախսումները ՀՆԱ-ի նկատմամբ /ընթացիկ գներով/,
- GTERM-ը՝ առևտրի աճի մակարդակը

DREV-ը՝ տարիների կտրվածքով փաստացի իրադարձությունների փոփոխական, ներառյալ հեղափոխությունից հետո ճգնաժամային իրավիճակ. այն 1978-1980թթ. տարիների համար եղել է ”1” , իսկ մնացած տարիների համար՝ ”0”:

Մոդելի մեջ փակագծերում նշված թվերը ցույց են տալիս ”t” վիճակագրական մեծությունը:

Մոդելի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ LHIPOP, IGDP, XMGDP, տնտեսության գլոբալացման ցուցիչները, մարդկային և ֆիզիկական կապիտալ ներդրումները էապես խթանում են մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակի աճը՝ GCGDP: Դա նշանակում է, որ վերջինիս և մատնանշված փոփոխականների միջև գոյություն ունի դրական, նշանակալից փոխհարաբերություն:

Մյուս կողմից GGDPP և GTERM փոփոխականների գործակիցների բացասական նշաններից ելնելով կարելի է մեկնաբանել առևտրի և պետության չափի բացասական ազդեցությունը մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի մակարդակի վրա /երրորդ վարկածի հաստատումը/:

GXO փոփոխականի գործակիցը մատնանշում է երկրի տնտեսության վրա նավթային եկամուտների զգալի ազդեցությունը: Այս փոփոխականը մոդելում ընդգրկվել է ցույց տալու նավթային արտահանումներից եկամուտների աճի մակարդակի դրական նշանակալից ազդեցությունը /չորրորդ վարկածի հաստատումը/:

Այս ռեգրեսիոն մոդելի արդյունքները ցույց են տալիս դրական նշանակալից փոխհարաբերության գոյությունը տնտեսության գլոբալացման և Իրանում տնտեսական աճի միջև /առաջին վարկածի հաստատումը/:

Նկատի առնելով այն հանգամանքը, որ պետության հանրային ծախսումները կարող են եկամտի բաշխման անհավասարության նվազեցման գործում արդյունավետ լինել, կարելի է ակնկալել, որ զարգացման 1-4-րդ ծրագրերի ընթացքում՝ 1988-2014թթ., պետության հանրային ծախսումների աճը նպաստել է՝ այդ տարիների ընթացքում եկամտի բաշխման անհավասարության կրճատմանը: Այստեղ փորձ է արվել ուսումնասիրել Իրանում պետության հանրային ծախսումների ազդեցությունը եկամտի բաշխման անհավասարության վրա՝ հաշվի առնելով եկամտի բաշխման վրա այս ծախսումների ազդեցության չափը և նշանակությունը, ժամանակագրային շարքի մոդելի կիրառմամբ: Մոդելը ներկայացնելուց առաջ տրվում են դրա բաղադրիչների վերաբերյալ անհրաժեշտ մեկնաբանությունները:


Ա. Տնտեսական աճ: Տնտեսական աճի և եկամուտների բաշխման միջև կապը չափազանց բարդ է: Դասական տնտեսագետները համոզված էին, որ հնարավոր չէ տնտեսական աճը զուգորդել եկամտի բաշխման բարելավման հետ: Նրանք տնտեսական արագ աճ ապահովելու պայմաններից մեկը՝ եկամուտների բաշխման մեջ, անհավասարության սրացումն էին համարում: Տնտեսական աճը հասարակության մեջ մշտապես աղքատության առաջացման պատճառ է հանդիսանում: Հարկ է նշել, որ մի շարք զարգացած երկրների վերջին վիճակագրական ուսումնասիրությունները

բազմաթիվ օրինակներ են ցույց տալիս, որոնցում այդ երկրները կարողացել են համադրել տնտեսական աճը եկամտի բաշխման բարելավման հետ: Աճի և անհավասարության ուղղակի կապի պատճառներն այն են, որ տնտեսական աճը՝ բարձր եկամուտներ ունեցող հասարակական խավի մոտ կարող է դառնալ քաղաքացիների շրջանում եկամտի անհավասարության աճի պատճառ:

Բ. Գնաձ: Գնաձը զարգացող երկրների տնտեսության բարդություններից մեկն է: Որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ մեծ տատանումներով գնաձի բարձր մակարդակը կապված է եկամուտների անհավասարության բարձր մակարդակի հետ: Գնաձի ավելացումը վկայում է տնտեսական քաղաքականության մեջ կայունության և հավասարակշռության բացակայության մասին, ինչը պատճառ է դառնում ներդրումների և արտադրության ոլորտում ակտիվություն ցուցաբերելու դրդապատճառի նվազման և ռեսուրսների բաշխման գործընթացի խաթարման համար: Այս հետևանքներից յուրաքանչյուրը երկրում եկամտի բաշխման գործընթացին խանգարող գործոն է հանդիսանում:

Գ. Գործազրկություն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր տնտեսության մեջ և զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրներում գործազրկության աճը կամ զբաղվածության նվազեցումը մշտապես եկամտի, զբաղվածության անհավասարության և աղքատության ձևավորման հիմնական առանձնահատկությունն է եղել: Անշուշտ գործազրկության կրճատումը այն դեպքում կարող է դրական ազդեցություն ունենալ եկամուտների բաշխման վրա, երբ այն իրականացվի լայնատարած կերպով՝ ընդհուպ մինչև գործազրկության վերացումը: Այս դեպքում տնտեսության կառուցվածքը փոփոխվում է և մի նոր ասպարեզ է ստեղծվում անհավասարության կրճատման համար: Շուլցը (1961) այն հետազոտողներից է, ով ուսումնասիրել է գործազրկության և գնաձի աճի ազդեցությունը եկամուտների բաշխման անհավասարության վրա: Նա՝ օգտվելով ժամանակագրական տվյալներից, անհավասարության ամենաազդեցիկ գործոն է համարել գործազրկությունը:

ԻԻՀ-ում տնտեսական բարեփոխումների ծրագրի իրականացման շրջանակում ստացված արդյունքները ներկայացվել են տնտեսական բարեփոխումների ցուցիչի (ERI) միջոցով, որը բերված է գծապատկեր 1-ի տեսքով:



Գծապատկեր 1. ԻԻՀ-ում իրականացրած բարեփոխումների դինամիկան, 1988-2014թթ., % (6-րդ կառավարություն և 10-րդ կառավարություն)
Աղբյուր՝ հետազոտության արդյունք

- Կորորդինատների ուղղահայաց առանցքով նկարագրված է տնտեսական բարեփոխումների ցուցիչի (ERI- Economic Reform index) փոփոխությունները՝ արտահայտված տոկոսով, իսկ հորիզոնական առանցքով ներկայացված է փոփոխությունների ժամանակահատվածը:

Ինչպես երևում է գծապատկերի տվյալներից, ԻԻՀ-ում տնտեսական բարեփոխումների ծրագրի իրականացումն ուղեկցվել է տատանումներով և թեպետ այն հիմնականում եղել է դրական, սակայն վերջին տարիներին նկատվել է բացասական միտում, որը կապված է եղել 10-րդ կառավարության օրոք սղաճի օրական կտրվածքով կտրուկ աճի հետ: Հետագա տարիներում փոփոխությունների միտումը կրկին դրական է եղել, ինչը մատնանշում է՝ երկրի տնտեսական կյանքում տեղի են ունեցել դրական փոփոխություններ: Վերջինս կապված է նոր կառավարության կողմից տնտեսական բարեփոխումների ծրագրի իրականացման ընթացքին հետևողական և արդյունավետ վերահսկողության հետ: Այդ բարեփոխումների ցանկից կարելի է նշել 2025թ. ծրագիրը, որը հանդես է գալիս «Դոտագիաների նպատակաուղղված տրամադրում» կարգախոսով: Այս ծրագիրը կարելի է համարել ԻԻՀ-ի տնտեսական քաղաքականության և հիմնական ծրագրերի առանցքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԻԻՀ տնտեսական բարեփոխումների գործընթացի և դրանում պետության դերի ուսումնասիրման աղյուսները ցույց են տվել, որ պետության գործունեությունը որոշ տարիների ընթացքում (2000-ականների սկզբին) արդյունավետ է եղել, իսկ որոշ տարիներին էլ տնտեսական բարեփոխումները դանդաղ են ընթացել: Այնպես որ, նավթային եկամուտների զգալի մասից օգտվելու նպատակ հետապնդող Իրանի ենթակառուցվածքների և մարդկային կապիտալի զարգացման վրա հիմնված տնտեսական բարեփոխումների ծրագրերի արդյունավետությունը լավագույնս դրսևորվեց տնտեսական աճի տեսքով: Դրա արդյունքը հանդիսացավ ներքին շուկայի ընդլայնումը, հասանելիությունը արտաքին ռեսուրսներին ու կապիտալին և ներդրումային հնարավորությունների ավելացումը: Այդուհանդերձ, շատ այլ դեպքերում, քաղաքական ոչ կառուցողական մոտեցման հետևանքով երկիրը չկարողացավ օգտվել գլոբալացման լայն հնարավորություններից:

2. Արդյունքները ցույց են տալիս, որ ԻԻՀ տնտեսական բարեփոխումների ծրագրերը տնտեսական զարգացման նախագծի շրջանակներում, իրականացվել են յոթ՝ սուբսիդիավորման, հարկային, մաքսային, բանկային, արտադրության, ապրանքների և ծառայությունների մատակարարման և ազգային արժույթի արժևորման համակարգերի բարեփոխումների ուղղություններով:

3. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարելի է ասել, որ տնտեսական բարեփոխումների կառուցվածքում պետական քաղաքականության դերն ու արդյունավետությունը կարևոր նշանակություն ունի: Ակտիվ բնակչության ընդհանուր մակարդակը կարող է ընդունվել որպես տնտեսական բարեփոխումների քաղաքականության արդյունավետությունն ապահովող հիմնական շարժիչ ուժ, որն ազդում է տարբեր երկրների տնտեսական աճի կառուցվածքի վրա:

4. Պետության դերի ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ ԻԻՀ տնտեսության մեջ պետության դիրքի վրա մեծապես ազդել են տվյալ ժամանակահատվածում իշխող միտումները: Իրանի իսլամական հեղափոխությունից առաջ և հետո կիրառված զարգացման ծրագրերի արդյունքում, հեղափոխությանը հաջորդող տարիներին պետության դերը՝ երկրի տնտեսության մեջ աճել է: Առաջինից չորրորդ զարգացման ծրագրերում՝ պետության դերի փոքրացման մոտեցում գործնականում չի եղել: Այս ժամանակահատվածում պետության չափը նույնիսկ ավելի է մեծացել, որոշակի ցուցանիշների առումով, ինչպես օրինակ բյուջեի կազմում մտնող հանրային ծախսումների կշիռը ՀՆԱ-ի մեջ: Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ մասնավորեցման քաղաքականությունը (հոդված 44) գործնականում ցանկալի արդյունք չի ունեցել:

5. Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ակտիվ երիտասարդ բնակչությունը տնտեսական բարեփոխումների քաղաքականության հարցում պատշաճ ազդեցություն է ունեցել: Ներքին զարգացման միջոցով այն կարող է բարձրացնել արտադրության և ծառայությունների արդյունավետությունը, ինչն էլ իր հերթին կարող է ազդել ազգային եկամտի աճի վրա:

Առաջարկություններ

1. Բազմակողմանի բարեփոխումներն ավելի աղյունավետ են լինում երբ դրանք իրականացվում են շարունակական հիմունքներով՝ ներառելով տնտեսության բոլոր բնագավառները, այդ թվում՝ բանկային, ֆինանսական, ապահովագրական համակարգերը և առևտրի ոլորտը: Ուստի առաջարկվում է, որ բարեփոխումների գործընթացը չընդհատվի՝ պետական կառավարման համակարգում փոփոխությունների հետևանքով:

2. Առաջարկվում է բնակչության գրագիտությունը և հասարակության բոլոր շերտերում կրթությունը դարձնել պարտադիր պահանջ: Դա նշանակում է, որ հասարակության մակարդակով կրթության և գրագիտության բարձրացման նպատակով՝ ի լրումն տղամարդկանց, 12-30 տարեկան կանանց և աղջիկների կրթություն ստանալը նույնպես էական գործոն է:

3. Առաջարկվում է տնտեսական բարեփոխումների և ազատականացման ծրագրի մեջ ներառել մասնավորեցումը և համաշխարհայնացումը /գլոբալացումը/:

4. Պետության պասիվ քաղաքականության հետևանքով, օրինակ գլոբալացման գործընթացից նահանջելը, ԻԻՀ-ը զրկվեց տնտեսական աճի մի շարք կարևոր հնարավորություններից: Ելնելով այս փաստից, որպեսզի տնտեսական բարեփոխումներն արդյունավետ լինեն, առաջարկվում է՝ քաղաքական և օրենսդրական դաշտում քաղաքականությունները համաձայնեցվեն տնտեսական բարեփոխումների թիրախային նպատակների հետ:

5. Ի տարբերություն Չինաստանի, որն այսօր դարձել է տնտեսապես հզոր երկիր, որոշ զարգացող երկրներում բարեփոխումների ծրագրերը, ինչպիսիք են մասնավորեցումը, առևտրի ոլորտում խոչընդոտների վերացումը, դրամավարկային, բանկային և մաքսային համակարգերի բարելավումը և սուբսիդիաների կրճատումը արդյունավետ կերպով չեն իրականացվել: Ելնելով դրանից, առաջարկվում է, որ ԻԻՀ օրենսդիր և բարձր իրավասություն ունեցող մարմինները, պետական տնտեսական բարեփոխումների համակարգում համաձայնեցված գործունեություն ծավալեն՝ քաղաքական, հասարակական, մշակութային, օրենսդրական և այլ ոլորտներում:

6. Առաջարկվում է ԻԻՀ-ում ստեղծել ինքնուրույն գործունեություն ծավալող կենտրոնական բանկ, որը դեպի տնտեսական վերելք տանող լավագույն մեխանիզմներից մեկն է: Այն կօգնի վերահսկելու արտարժույթի տատանումները, լիկվիդայնությունը և ինֆլյացիան, ապահովելու գների կայունությունը, բարելավելու առևտրային հաշվեկշիռը, վերահսկելու վարկավորումները և տպել դրամ՝ առանց պետության միջամտության:

7. Նաև առաջարկվում է երկրում ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ հնարավոր կլինի տնտեսական, հասարակական, քաղաքական, մշակութային անկախ գործունեության միջոցով զարկ տալ ներդրումների անվտանգությանը և ապահովել տնտեսական կայունությունը: Այդպիսի պայմաններում, կապիտալի հոսքը՝ երկարաժամկետ ներդրումներում կավելանա, մասնավոր հատվածը կհզորանա, մակրոտնտեսական ցուցանիշները կբարելավվեն և կապահովվի տնտեսական աճը:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Շեքոֆթեհ Ասգարաբադ Ա., «Globalization and liberalization and economic reform», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում» գիտական հոդվածների ժողովածու, ISSN 1829-071x; Երևան, N 6 , 2011 թ., էջ` 8-15
2. Շեքոֆթեհ Ասգարաբադ Ա., «Privatization and liberalization industries», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում» գիտական հոդվածների ժողովածու, ISSN 1829-071x; Երևան, N 6 , 2011 թ.. էջ` 16-22
3. Շեքոֆթեհ Ասգարաբադ Ա., «Industral economic reform: case study of Iran and Turkey», «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան, N 3 (141), մարտ 2012 թ., էջ` 23-26
4. Շեքոֆթեհ Ասգարաբադ Ա., «Globalization», «Միխթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հայ-ռուսական միջազգային համալսարան, N 4-6 (33), 2012 թ., էջ` 155-162:
5. Շեքոֆթեհ Ասգարաբադ Ա., “The global economy and the globalization”. “Հայաստան, Ֆինանսներ և էկոնոմիկա” հանդես, Երևան, N11 (149), նոյեմբեր 2012թ., էջ` 26-32
6. Շեքոֆթեհ Ասգարաբադ Ա., Գալստյան Գ., Ջաֆարի Սամիմի Ա., “An estimation of International Finance development in the OIC countries”. Journal of basic and applied scientific research, ISSN 2090-4304, N 3(5), 2013թ., էջ` 117-122
7. Շեքոֆթեհ Ասգարաբադ Ա., Գալստյան Գ., Ջաֆարի Սամիմի Ա., “An investigation of relationship between education current expenditures and economic growth: case study of Iran”. Journal of basic and applied scientific research, ISSN 2090-4304, N 3(5), 2013 թ., էջ` 982-988

АЛИАСГАР МОГАММАДГОСЕЙНОВИЧ ШЕКОФТЕАСГАРАБАД
ЦЕЛИ ЭКОНОМИЧЕСКИХ РЕФОРМ И РОЛЬ ГОСУДАРСТВА
(НА ПРИМЕРЕ ИРИ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 “Общая экономика”.

Защита диссертации состоится 24-го марта 2017 г. в 13³⁰ часов на заседании специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в ЕГУ по адресу: г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

Р Е З Ю М Е

Настоящее исследование преследует цель проанализировать и охарактеризовать эффективность политики экономических реформ ИРИ, акцентируя роль и важность государства на макроэкономическом уровне.

Начиная с 30-ых годов 20-ого века проблема места и роли государства в экономических реформах была предметом обсуждения экономистов и разных направлений экономики. Сегодня приемлемо мнение, что государство должно осуществлять свою роль не только в качестве предводителя и контролера, а также в качестве органа, содействующего экономическим реформам.

В настоящее время экономике Ирана характерны снижение темпов экономического роста, низкая производительность, неравномерное распределение доходов, отрицательное сальдо внешней торговли и безработица. Исследования указывают, что в списке главных экономических трудностей страны можно отметить государственный контроль за отечественной продукцией и значительной частью инвестиций в экономику (более чем 80 %), что крайне ощутимо в ходе осуществления краткосрочных и среднесрочных программ и проявляется в виде вмешательства государства.

В диссертации исследованы существующие точки зрения и подходы, относящиеся к экономической роли государства, роль государства в разных программах по развитию экономики Ирана, факторы экономического развития, воздействие глобализации на экономический рост, и стратегические программы развития ИРИ в рамках перспективной программы 2025 г.

Объектом исследования была роль государственных режимов, установленных в ИРИ после 1980 г., в государственной системе. Предметом исследования является 20-летняя

перспективная программа экономического развития ИРИ и проект экономических реформ, основанный на сокращении субсидий.

Исследование аналитико-описательное. В качестве методологической базы приняты статистические, эконометрические и регрессионные аналитические тест-модели. Был применен также тест Грэнджера на причинность (Grenger causality test). Использована компьютерная программа Микрофит.

Научная новизна диссертации состоит в следующем:

1. С применением эконометрических моделей выявлено, что глобализация экономики имело положительное воздействие на уровень экономического роста ИРИ.

- Связь между экономическим ростом Ирана и глобализацией установлена в качестве положительной (по уровню значимости в 5 %) и односторонней связи - иначе говоря глобализация экономики явилась стимулирующим фактором для экономического роста в ИРИ.

2. Основываясь на результаты исследований, относящихся к размерам государства, установлено, что увеличение размеров государства негативно отразилось на рост промышленности в экономике ИРИ.

- В частности результаты теста Грэнджера установили, что глобализация экономики способствовала росту уровня производства, что, в свою очередь, стимулировало развитие внешней торговли.

- В свою очередь свобода торговли также положительно повлияла на рост производства.

3. С применением многофакторных регрессионных моделей в краткосрочном и долгосрочном разрезах для ИРИ представлена связь между общеобразовательным обучением и бедностью. Установлено, что рост общественных расходов положительно повлиял на справедливое распределение доходов, способствовал сокращению неравномерного распределения доходов и повышению уровня благосостояния общества.

- Рост общественных расходов на 1 % снизил коэффициент Джини на 0.11, что оценивается положительно.

- В то же время рост безработицы негативно отразился на распределении доходов и стал причиной увеличения коэффициента Джини.

ALIASGHAR MOHAMMADHOSSEIN SHEKOFTEHASGARABAD
THE OBJECTIVES OF ECONOMIC REFORM AND THE ROLE OF GOVERNMENT (ON THE
EXAMPLE OF IRI)

The Dissertation is submitted for pursuing the PhD degree of Economics in the specialty of 08.00.01 “General Economics”.

The Defense of the dissertation will take place on 24th of March 2017 at 13³⁰, at the Meeting of Specialized Council 015 of the SCC of the RA acting at the Yerevan State University.

Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia.

A B S T R A C T

The dissertation is aimed at analyzing and describing the effectiveness of IRI economic reforms policy by focusing on the macroeconomic role of the government and its importance.

In economic reform process, the role and position of state, since the 1930-s of 20-th century has continuously been the topic of debate and discussion by economists and specialists engaged in various areas of economics.

Nowadays, it has been increasingly accepted that the state should play its role mainly as a contributor and provider of facilities rather than being a manager or leader.

The Iranian economy is currently characterized with declined economic growth, poor productivity, unequal distribution of incomes, negative balance of foreign trade, and emphasized unemployment.

In studies about the Iranian economy, among the most important reasons can be mentioned the governance and supervision by the government on the national production and significant part of investments (more than 80%), which is highly noticeable in implementation of both short and long term programs in the form of state intervention.

In this research the different approaches and theories about the economic role of the government, the role of government in the various planned programs for Iranian economic development, the economic growth factors, the effect of globalization on the economic growth, as well as the strategic development programs of IRI within the development perspective document of 2025 year were studied.

Research object is considered the role and governance approaches of state system in Islamic Republic of Iran after 1980. Research subject includes Iran Islamic Republic plan of economic reforms based on deletion of subsidies, as well as the document of 20 years economic development perspective.

The research is based on analytic-descriptive method. In the research as methodological basis, the statistical, econometric and regression tests models were used. Also, Granger causality test was used. MICROFIT computer software was used to analyze the data.

The research novelties are as follows:

1 - Based on the results of the econometric models, it was revealed that the index of economic globalization has positive impact on the rate of economic growth of IRI.

- The relationship between Iranian economic growth and globalization based on the test results was revealed to be positive and significant (at 5 % significance level), and is a unilateral relationship. In other words, the globalization of economy was the driving factor to cause economic growth in IRI.

2 - Based on the results of the model study on the effect of government size on economic growth, it was revealed that the government increased size has a negative influence on the economic growth (per capita production growth) of IRI.

- Especially, the results of Granger causality tests have revealed that economic globalization has increased the level of per capita output, which in its turn has led to an increase in per capita production of foreign trade.

- The trade liberalization in its turn was revealed to have a positive significant influence on the growth of output per capita (production level.)

3- By applying short term and long term regression models, the relationship between public education and poverty in IRI was revealed. It was revealed that increases in public spending have a positive impact on fair distribution of income, reduction in inequalities of income distribution and social welfare increase.

-The results indicate that for every 1 % increase in government social spending on average, the Gini coefficient is reduced by 0.11. (This indicates the negative effect of social spending on the Gini coefficient.)

- The increase in inflation and unemployment has a negative impact on income distribution and caused an increase in the coefficient of Gini.

